ՄԵԾԱՐՈՅ

ՄԱՅՐ ԹԷՈՊԻՍՏԷ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

Ծնած է Խարբերդ, 13 Յունիս 1870-ին։

Մկրտութեան անունն էր Հռիփսիմէ. գեղեցիկ կանխագուշակութիւն իր ապագայ կոչումին։

Հազիւ տասնամեայ՝ կը զգայ տենչը կուսական աստուածանուէր կեանքի և յաղթելով դժուարութիւններու կու գայ Պոլիս, Անարատ Յղութեան Միաբանութիւնը, 8 Դեկտեմբեր 1887-ին։

Նորընծայի սքեմը կը զգենու 1888, Դեկտեմբեր 9-ին։

Ս. Ուխտերով կը նուիրուի Յիսուսի 1890, Փետր. 5-ին։

Առաջին առաքելավայրը կ'ըլլայ Մալաթիա, ուր կը մնայ 1890-ի Սեպտեմբերէն մինչեւ 1897-ի Յուլիսը։

Այնուհետեւ կը զրկուի Պէօյիւք Տէրէ և Սամաթիա 1897-էն 1900։

Հուսկ կը տեսնենք զինքը պատասխանատու պաշտօններու գլուխը։

Տեղական Մեծաւորուհի եղած է Պիլէճիկ՝ 1900-1907, Քաղկեդոն՝ 1907-1913, և 1916-1922, Պէյրութ՝ 1922-1924, Թորինոյ՝ 1924-1926։ Եղած է տեսչուհի Պոլսոյ Մայր Տան Վարժարանին՝ 1913-1916, իսկ Ընդհանուր Մեծաւորուհի՝ 1926-1933, 1937-1947, 1947-1951, և Ընդհանուր Մատակարար՝ 1933-1937։

Կարելի է ըսել թէ Մայր Թէոպիստէի ամբողջ կեանքը եղած է շարունակեալ խաչակրութիւն մը։

Մալաթիոյ առաքելութեան շրջանին, 1892-ին տեղի կ'ունենայ այն զարհուրելի երկրաշարժը որ աւերներ կը գործէ և կը ստիպէ քոյրերն ալ ահով դողով վրաններու տակ բնակիլ վեց երկար ամիսներ։ Ասոր կը յաջորդէ սոսկալի ժանտախտը 1893-ին, որուն զոհ կերթայ նաեւ իր ընկերակից քոյրերէն մին։ Ի վերջոյ, 1895-ի ահաւոր կոտորածը։ Սոյն երեք ազէտալի դիպուածներուն մէջ կը յայտնուի դեռատի քոյր Թէոպիստէի հոգեկան կորովն ու անձնազոհութիւնը որ քաջալեր կ'ըլլայ տարաբախտ ժողովրդեան։ Իր հերոսական միջամտութեամբ կը փրկէ կեանքը Վիճակաւորին։

61 տարիներ վաստակած է նա Տիրոջ այգւոյն մէջ, զոհելով անձը Աստուծոյ մեծագոյն փառքին, յօգուտ ազգին և իր սիրելի Միաբանութեան հոգեւոր ու ժամանակաւոր զարգացումին։ Քաղկեդոնի պաշտօնավարութեան շրջանին, 1907-1913, իր զոհաբեր գործունէութեան արդիւնք կ'ըլլայ Վարժարանին սիրուն շէնքը, որ արժած է իրեն որքան աշխատանք նոյնքան նաեւ բարոյական տաժանք։ 1908-ի Ապրիլին Հռոմ կու գայ Ս. Խորհրդականուհի Մայր Եղիսաբեթ Կապրաչեանի հետ և առանձին ունկընդրութիւն մը կ'ունենան Պիոս Ժ. Սրբազան Քահանայապետին։ Նորին Սրբութիւնը մասնաւոր հայրենի գորովով ցոյց կու տայ, ձեռքը գլխուն վրայ դնելով կ'օրհնէ զինքը և կը խոստանայ աջակցութիւն իր ձեռնարկին։ 1914-ի և 1940-ի աշխարհաւեր պատերազմներու սեւ օրերուն, Նախախնամութեան բարեխնամ տեսչութեան գործիքը կ'ըլլայ Մայր Թէոպիստէ, ամենազաւրուրին միջոցներով ապահովելով պարէնաւորումը Միաբանութեան Պոլսոյ և հուսկ Հռոմայ տուներուն, միեւնոյն ժամանակ օգնելով նաեւ կարօտեալներու։ 1922-ին դժուարին պայմաններու տակ հիմը կը դնէ Պէյրութի Սբց. Հռիփսիմեանց վարժարանին, որ իր առաջին անձնազոհ առաքելուհիներուն քրտնաթոր ջանքերուն ու նուիրումներուն իբրեւ վարձ՝ ունի այժմու փառաւոր դիրքը։ Թորինոյի որբանոցին մէջ կ'ունենայ տաժանակիր պաշտօնավարութիւն մը, որուն կը յաջորդէ Ընդհ. Մեծաւորութեան ծանրագոյն խաչակրութիւնը։

21 տարի վարած է Ընդհ. Մեծաւորուհւոյ պաշտօնը խոհեմազարդ իմաստուն տեսչութեամբ։ Բիւրաւոր հայ օրիորդներ վայելած են իր մայրենի գոհար սրտին գանձերը. և այժմ ընտանիքի պարկեշտասուն մայրեր, հայ կնոջ յատուկ առաքինութիւններով օժտուած, երախտապարտ հոգւով կը յիշեն զինքը։

Մայր Թէոպիստէի անհատական կեանքը եղած է աղօթասէր, մահացեալ և խոստակեաց։ Սկզբունքի և անկուն կամքի տէր, ուղղամիտ, պարտաճանաչ, գործունեայ և խոհեմ, արիաբար կուրծք տուած է իր պատասխանատու պաշտօններուն յարակից բազմապիսի պայքարներուն, կրկնելով միշտ անվեհեր «Մեծ է զօրուրիւն Քրիստոսի»։ «Տէր է իմ օգնական»։ Անսասան վստահութիւն մը առ Աստուած և սիրագեղ ապաւինութիւն առ Տիրամայրն, զոր կը պատուէր մասնաւորապէս Ս. վարդարանի ջերմեռանդութեամբ, եղած են իր զոյգ զէնքերն անպարտելի, որոնցմով ամրապնդուած՝ գիտցած է կրել, լռել և նուիրել, խաղաղ ու անվրդով անցնելով հուրի ու սուրի մէջէն։

Իր վաստակաբեկ ու բազմարդիւն կեանքին վերջին չորս ամիսներն եղան համակերպութեան, աղօթքի մշտատեւ ներգործութիւն մը, զոր կ'արտայայտէր Փառք Քեզ Աստուած, Ողջոյն քեզ Մարիամ սլաքականներով։ Մինչեւ յետին օրն իր կեանքին շարունակեց գործադրել մասնաւոր հաճեալ կենցաղին սովորոյթները։ Միշտ սիրալիր ու քաղցրաբարոյ էր խօսքով ու գործով։ Յիսուսի Խաչը. արժանի եղաւ թանկարժէք կեանքին վերջին խնկաբոյր զոհը միացնելու Գողգոթայի աշխարհակեցոյց Մեծ Զոհին։ Ննջեց արդարոյն քունը Աւագ Ուրբաթի երեկոյեան ժամուն։

Տ. Տ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Ական ՍՍՀ
Ա. ԻՄ Ա. Մաշտոցի անվան

Ողբ. Ներսէսեան Ղուկասի մահուան փոխան ծաղկեպսակի կը նուիրեն 169 տոլար Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան։

Յաւակցութիւններ և շնորհակալութիւն Ներսէսեան աղնիւ ընտանիքին, և բոլոր նուիրատուներուն։

ՄԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԵՂԻՇԷ, Պատմութիւն Վարդանանց պատերազմին, էջ 438, գինն է՝ Զուից. փր. 2.—

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ ԹԱԹԱՐԱՑ, Բ. տպ. էջ 94, գինն է՝ Զուից. փր. 2.—

ՓՕՂ ՎԱՂԵՐԻ ԵՒ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ, գրեց՝ Հ. Մեսրոպ Վ. Ճանաշեան, էջ 96, գինն է՝ Զուից. փր. 1.—

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ – սկիզբէն մինչեւ 1300, գրեց՝ Հ. Կիւրեղ Վ. Քիպարեան, էջ 368, գինն է՝ իտալ. լիր 750.—

Հ. ՎԱՀԱՆ Վ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ՝
ԽԵՂՃ ՄԱՐԳԿՈՒԹԻՒՆ – բանաստեղծութիւններ, էջ 244, գինն է՝ Զուից. փր. 2.50

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԸ – բանաստեղծութիւններ, էջ 256, գինն է՝ Զուից. փր. 2.50

POESIE, pag. 262, գինն է՝ իտալ. լիր 300

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ԵՒ ԳՐԻ ԴԱՍԵՐ, Հ. Գէորգ Ոսկեանի, Գ. տպ. գինն է՝ Զուից. փր. 1.50

ՍԵՒԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ *Նախակրթարանի համար*, Ա.–Զ. տարիներ։ *Ա. Բ. Գ. Դ.* տարիներու իւրաքանչիւրին գինն է՝ Զուից. փր. 3.—
Ե. տարին՝ Զուից. փր. 3.20
Զ. տարին՝ Զուից. փր. 3.50

ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՄԱՆ ԳՐՔԵՐ

ՓԱԼ ՃԱՄԲՈՒ ՏՂԱՔԸ, Թրգմ. Հ. Անդրէաս Փոկոլեան, էջ 230, գինն է՝ Զուից. փր. 2.50

ԿԸ ՓԱՓԱՔԻՄ ՄԵԾ ԸԼԼԱԼ, էջ 120, գինն է՝ Զուից. փր. 1.50

ՍՐԲԱԿԵԱՑ ՄԱՆՈՒԿՆԵՐ, Շմիթմայրի, էջ 196, գինն է՝ Զուից. փր. 0.75

ՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈԳԻ ՄԸ, Էրնէսթ Տրուէնի, էջ 120, գինն է՝ Զուից. փր. 0.50

ՄԱՔՈՒՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ, Թօք Թիհամէրի, էջ 194, գինն է՝ Զուից. փր. 3.—

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ, Յ. Շրիվէրի, էջ 326, գինն է՝ Զուից. փր. 1.50

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐ ԱԲԲԱՀՕՐ, Հ. Մանուէլ Վ. Թաշճեանի, էջ 112, գինն է՝ Զուից. փր. 0.50

ԱՆԹՈՆԻԷԹԱ ՄԷՈՅ – ՆԵՆՆՈՒԻՆԱ, Թրգմ. Հ. Գեորգ Վ. Զրաֆեան, էջ 230, գինն է՝ Զուից. փր. 1.25

ԱՐԾՈՒԱԲԵՐԴԻ ԳԱՂՏՆԻՔԸ, էջ 158, գինն է՝ Զուից. փր. 0.50

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՃԱՆԱՇԵԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՐՏԱՒԱԶԴ ԱՐՔ. ՍԻՒՐՄԷԵԱՆ
ԲԱՌԳԻՐՔ Ս. ԳՐՈՅ

Սատնալու համար դիմել՝

IMPRIMERIE ARMÉNIÈNNE
St. Lazare VENISE
(Italie)

© National Library of Armenia